

ԳԵՎՈՐԳ ՂԵՎՈՐԻԿՅԱՆԻ «ՍՐԲԱՑԱԾ ՀՈՒՅԱՐՁԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄԱԳԵՂԱՐԿԵՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ<sup>38</sup>

Անա Երկանյան

Բանալի բառեր՝ պատմագրություն, գեղարվեստական, ժամանակագրություն, հայ ժողովրդի պատմություն, ազգային-ազատագրական շարժում, հրամանատար Մոնտեզոր, հուշարձան:

«Սրբացած հուշարձան» վավերապատումի հյուսվածքով գրված աշխատությունը լուս է տեսել 1975 թվականին՝ ստեղծագործական մի նոր գիծ ավելացնելով Գևորգ Ղերիկյանի գրական ինքնատիպ ձեռագիրն:

«Ժողովրդի հիշողության, օտար լօի տակ տքնության, դժվար ճամապարհ անցած Հայաստանի, նրա օրիասական վիճակի, հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության, ժողովրդական երախտագիտության մասին է Գ. Ղերիկյանի «Սրբացած հուշարձան» գիրքը,-նշում է Ա. Հովսեփյանը: [1]

Անդրադարձնանք աշխատության ժամրի խնդրին՝ նշելով, որ Գ. Ղերիկյանի ժամանակակիցներն իրենց հոդվածներում քննում են այս հարցը՝ այն անվանելով էսսեների ժողովածու, վիպագրություն-ժամանակագրություն՝ որոշակիորեն տատանվելով համարել պատմագեղարվեստական ժամանակագրություն:

«Պատմական անցքերն ու պատերազմական գործողություններն այնպիսի տարբեր ձևերի մեջ է ներկայացնում արձակագիրը, որ դժվար է որոշել պատմականի և գեղարվեստականի սահմանները: Այս գիրքը և վեպ է, և պատմություն», -նշում է Գրիգոր Հակոբյանը: [2]

Հավելենք նաև մեր կարծիքը՝ հավաստելով, որ աշխատությունը կարող ենք համարել պատմագեղարվեստական ժամանակագրություն: Ղերիկյանը ոչ միայն պատմությունն է շարադրում՝ օգտվելով այս կամ այն աղբյուրներից, այլև պատմական ժամանակագրությունը ընդհանուր է գեղարվեստական հաստիքածներով՝ մեջբերելով հայ հին և միջնադարյան քնարերգության ինքնատիպ նմուշներ: Ահա այստեղ է Ղերիկյանի գրական մեթոդի գեղեցկությունը: Ու նորարարությունը:

Աշխատության մեջ պատկերված է 16-19-րդ դարերում հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար խիստ կարևոր մի ժամանակաշրջան, որն իր լրումին է համառու Ուսու-պարսկական պատերազմով, Ղարաբիլիսայի պաշտպանության համար մղված մարտերով, Երևանի բերդի գրավմամբ, Էջմիածնի և Օշականի ճակատամարտերով: Հեղինակը նկարագրում է հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության գիմակցության դրսևորումը. «Հայ ժողովուրդը իր աչքով տեսավ ռուսական գորքի անպարտելիությունը, խիզախությունը և ռուս գինվորի մարդասեր հոգին: Եվ այդ բարեկամությունը թրծվեց ամենաթանկ բանով՝ մարդկային արյամբ»[3]: Ուսու-պարսկական առաջին պատերազմի ժամանակ հայ ժողովուրդը զգալի ռազմական և նյութական օգնություն ցուցաբերեց ռուսական զորքերին. «Հայերը ռուսական բանակներին օգնություն էին ցուց տալիս տարբեր ձևերով ու մեթոդներով: Պատերազմի հենց սկզբից, սեփական նախաձեռնությամբ, նրանք կազմակերպեցին աշխարհազորային

<sup>38</sup> Հոդվածն ընդունվել է 25.12.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., Գ.Ղերիկյանը:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

ջոկատներ, որոնք պաշտպանում էին իրենց բնակատեղերը, ինչպես նաև մասնակցում ռուսական գործերի հարձակողական մարտերին»[4]:

Նյութը շարադրելիս Գ. Ղերիկյանը մեծապես օգտվել է Արարել Ղավրիժեցու «Հայոց պատմությունից», Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքից, Զաքարիա Սարկավագի «Պատմագրութիւնից», «Հայերն ձեռագրերի ժեղարի հիշատակարաններից», «Մամր ժամանակագրություններից», Գյուտ քահանա Աղամեանցի «Դիւան հայոց պատմութեան», Ն. Գորոյեանցի «Պարսկաստանի հայերը», Լեոյի «Պատմութիւն հայոց թեմական հոգեւոր դպրոցի» գրքերից, օգտվել է նաև Եկեղեցիների վիճական արձանագրություններից: Հեղինակը քննում է Խաչատուր Ջուղայեցու պատմությունը, ուսումնասիրում միջնադարյան հուշարձանները և վիճական արձանագրությունները:

Գ. Ղերիկյանն օգտվել է նաև մի շարք ռուսական աղբյուրներից, ինչպես նաև մեջբերել հատվածներ Ղավիթ Գեղամեցու, Հովհաննես Մալվեցու, Կարապետ Բաղրիշցու, Գրիգոր Տղայի, Խ. Արովյանի ստեղծագործություններից:

Բազմաթիվ աղբյուրների համադրությամբ և հետազոտությամբ Գ. Ղերիկյանը ստեղծել է համահավաք պատմագեղարվեստական ժամանակագրություն՝ ներկայացնելով պատմական այն ժամանակահատվածը, երբ և՝ Արևելյան Հայաստանում, և՝ Արևմտյան Հայաստանում զարդոնք էին ապրում ազգային-ազատագրական պայքարի հոլուսերը: Ինչպես Ղերիկյանի մյուս ստեղծագործություններում, այնպես էլ «Սրբացած հուշարձան» աշխատությունում պատկերվում է Մշո Սուրբ Կարապետ վանքը որպես ազատագրական շարժման կենտրոն: Հատկապես ընդգծվում է այն հանգամանքը, որ ռուսական կանոնավոր բանակի կողքին մարտնչում էր հայկական ժողովրդական աշխարհագործը. «Վերածնվում էր հայկական գործը, կանգնում հայրենի երկրի պաշտպանության դիրքերում: Եվ կրկին հոդ հայրենի պաշտպանները՝ շինականն ու արհեստավորը զենք էին վերցնում: Ճիշտ է, նրանք միայն հրացանմեր ու թրեր ունեին և անվարժ էին շատերը, բայց կար ասելության վրեժը թշնամու հանդեպ, ազատության ծարավը: Եվ դրանք խիզախնության որինակներ էին ծնում»[5]:

Աշխատությունում պատմությանը ծոված են նաև պատմական իրադարձությունների հետ կապված ավանդություններ, ինչպես, օրինակ, պատմելով Աղա Մահմադ շահի 1795 թ. հունիսի վերջերին 50.000-անոց գործով Արաքս անցնելու և ասպատակությունների մասին՝ հեղինակը նշում է. «Ավանդության համաձայն Մահմադ շահի հրոսակների ձեռքով գոհվեց նաև Սայաթ-Նովան: Չոհվեց գույխ չխոնարհելով թշնամու արջը: Եվ Ճշմարտանման է ավանդությունը, քանզի նա միայն այդպես կարող էր գոհվել, թշնամու երեսին նետելով իր ըմբռուստ հոգու վերջին ճիշը»[6]:

Նաև ցույց է տրվում, թե այս ավերիչ արշավանքն ինչպես է բանաստեղծորեն պատկերվել Թիֆլիսի աշումներից Շամշի Մելքոնի «Ի վերայ աւերման Տփիլիս քաղաքի, զալուստեամբ աղայ Սուհամեր խանի» ողբախառն երգում.

**Քաղաքը, որ ներս էկա հարիլ հազար դզիքաշը,**

**Մէկ մէկուն ջոգեցին ողջ մէտի զօհում դարդաշը,**

**Քահաններուն շունն էր ուսում, ոչ մինը չմտաւ նաշը,**

**Գիտի պէս արիւն էր գնում, քոստան էր աթամորթու լէշը,**

**Որդին մօրիցն էին խլում, էր սուզ ու շիվան քաղաքի:**

**Քարքնմէն տարտան եսիրը, որն Արաքսատան է հասի,**

**Որն Բաղրադ, որն Բասրա, որն Խսպահան է հասի**

**Որն Քաշան, որն Թէհրան, որն Խորասան է հասի,**

**Որն Շաքի, որն Շիվան, որն Ղաղստան է հասի,**

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

**Նրանց անձար հերն ու մէրը որ մէկին վայ տան քաղաքիս[7]:**

Պատմության և արդիական կյանքի պատկերները աշխատությունը դարձնում են շատ հետաքրքիր. ինի լամազմությանը և նորի ժամանակակից կյանքի պատկերների համադրումը դարձնում է երկի գլխավոր գեղարվեստական արժեքը: Տպավորիչ է պատկերված հայորդի Ռուսումի քաջագործությունը: Մելիք Արովի որդին՝ Ռուսում բեկը, 2 անգամ ռուսական գորաջոկատին առաջնորդեց գործին պարեն տանելու: Ռուսումը գերի է ընկնում, իսկ Արա Միրզան որոշում է վրեժիսնորդի լինել Ռուսումի հորից: Եվ առաջարկում է կյանքը խնայելու համար դավանակիու լինել: Նա պատասխանում է: «Սահն ավելի սիրով կը նորեմ, քան դավանակիու կյինեմ» [8]: Այստեղ Ակրիկյանը մեջբերել է Ռուսումի՝ բանտում գրված բանաստեղծությունը, որի բնագիրը տպագրվել է «Բազմավէպի» 1847թ.-ի փետրվարի համարում: Այս բանաստեղծությունը Ռուսումը հանձնում է թարգմանին՝ ընթերցելու Արա Միրզային: Մեջբերենք մի հատված:

Մունետիկն ի ծայն բարձը աղաղակէ,  
Ժանտ դահիճըն սուր ի ծեռին անյագ սըրտ.  
Վագեր հանգոյն զիմ կենաց թէլ կորել խզնդրէ,  
Ի կախաղան և կամ սպան ու ի զիս տանէ,  
Քաղաքս համայն մահմեղական, զի՞ խուռըն գան,  
Զիմ մահ սրգան:

Մեծըն յԱրեանց արքայորդիդ Աբբաս Միրզայ,  
Սուր ի ծեռքին դահիճըն հէգ առընթեր կայ,  
Զիս թշնամիս քոյոյ ազգի պատրաստ ի մահ,  
Զիա րդ կամիս զսպանանել՝ շուտ հրամայե՛ա:  
Միայն սրգամ զի կապեալ կամ, թէ միւուս անգամ:  
Հրացան սուր ին

Ի ծեռու ունիմ, զգբազուկ իմ ծեզ ցուցանեմ[9]:

Բարկացած Միրզան քաջ հայորդու վիզը դմում է կոմղի մեջ և սեղմում: Ռուսումը քաղցած է մնում և մահանում: Հայերը մի կերպ ստանում են նրա դիակը և թաղում եկեղեցու բակում: Ակրիկյանն անգամ բաց չի թողնում տապանաքարի վրա գրված արձանագրությունը. «Այս է տապան Ռուսում Բէզի որդույ Մելիք Արովի»[10]:

Հայր և որդի Արովների հերոսությունը գիտակցված քայլ էր հարազատ ժողովրդի փրկության համար: Հեղինակը կարևորում է այն՝ համարելով հայ ազգային-ազատագրական շարժման ու պայքարի հերոսական դրսարումներից մեկը: Ներկայացնելով Ցիցիանովի և Թիֆլիսի հետևակային զնդի հրամանատար Մհնտրեզորի կատարած աշխատամքները հեղինակը չի բավարարվել պատմական տվյալ ժամանակաշրջանը նկարագրել միայն հայկական աղբյուրներով, հետազոտել է վրացական, թուրքական, ռուսական աղբյուրներ:

Ղարաբիլիսա տանող ժամապարհն Մոնտրեզորն իր փոքրաթիվ ջոկատով մարտի ժամանակ քաջաբար գոհվում է: Բայց ընկնում է շատ փառահեղ՝ կրծքով փակելով հրետանու փողը: Հեղինակը տարբեր աղբյուրներից տեղեկություններ է քաղել մայոր Սոնտրեզորի մասին: Հետազոտողը քայլ առ քայլ զնացել է Մոնտրեզորի հետքերով, պեղել մինչև վերջին հեղինակը, որը գրել է այս քաջարի հրամանատարի մասին եղած բոլոր փաստերը: Սորից ֆոն Կոցերու սպան թողել է հիշատակություն Մոնտրեզորի մասին. «Ճամապարհու րդ, կա նզ առ, և հարգանքով հանի՞ զիսարկե: Անուշադիր մի՛ անցիր մարմարէ մի պարզ շիրմից, որն արձանագրում է մի հերոսի անունը, որի գործերը ապահոված են նրա հիշատակի անմահությունը» [11]:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Նշենք նաև, որ Խ. Աբովյանը «Վերք Հայաստամի» վեպում ևս ամդրադարձել է քաջարի Մոնտեգոնի կատարած սիրանքներին, որտեղ վերջինս հանդես է գալիս Ղարա մայոր անվանումով։ Ղարա բարը արևելքում ունի ոչ միայն սև, այլև բազ իմաստը, ինչպես որ Ղարա թեշիշ չի նշանակում սև քահանա, այլ բազ քահանա։

Խ. Աբովյանը գրում է. «Էս միջումն ա ըլում, որ Նախչվանու քոր Թալրապի-խանը Ղարսա վրա կորիկ ա դուս գնում, փաշին ջարդում, երկիրը ուժնատակ տայիս, ու Ռուսն էլ նոր Փամբակ առած՝ էնտեղ մեկ մայոր ա ըլում, ավելի անունը՝ Ղարա [ևկ]: Խանը եղ դարնալիս ուզում ա, որ Փամբակ էլ մեկ ատամին խիի ու որ լսում չի թե Ղարա մայորը, մեկ քանի հարիր մարդից ավելի ո չինչ չունի, հրամայում ա, որ գնան, նրան սադ սադ բռնեն։ Բայց ռսի սալդաթի ու թովի հունարը դեռ չեն տեսած ըլում ողորմելիքը։ Ի՞րեք, չորս անգամ էնքան դոնչունը վրա է տալիս, բայց տեսնելով՝ թե Ռուսը պատի պես կանգնած՝ գյուլից էլ չի երես եղ դարձնում, փոխանը կատու ընկած՝ ձիու գյուխը շուր ա տալիս ու իր հողը գալիս»[12]։

Պատմությունն ընդհատվում է ներկայի շնչով։ հեղինակը փորձում է գտնել Մոնտեգորի գերեզմանը, բայց անցել է 170 տարի «և գետն է հունը փոխել, և՝ գերեզմանը»։ Տարիներ անց քաջարի մարտիկի սիրանքը ժողովուրդը շարունակեց գնահատել և ոգեկոչել։ Խսկ հայ ժողովուրդն իր երախտագիտությունը ռուս հերոսին հայտնեց՝ ճակատամարտի Վայրում կանգնեցնելով մի սրբացած հուշարձան ևս։ «Հուշարձանները քարեղեն հիշողություն են։ Քամայի քարի մեջ ժողովուրդը մարմնավորել է և ցավը, և ուրախությունը։ Քարին ի պահ է տվել նաև իր պատմությունը։ Եկ քարը պահել է ժողովրդական հիշողությունը», -հավաստում է հեղինակը։ [13]

Պատմական այս կամ այն անձինք աշխատությանը հաղորդում են ոչ միայն վավերականություն, այլև գեղարվեստական հմայք։ Գ. Կորիկյանը վավերականությունը օգտագործում է որպես պատումի հիմնավորում։ Նա ևս մեկ անգամ հիշեցնում է պատմության դասերը, նրա հերոսական էջերը, ուկրաինական և բելոռուսական ժողովուրդների ազատագրական պայքարը ռուս ժողովուրդի օգնությամբ, հայ-վրացական հարաբերությունները, մեծ տեղ հատկացնում 1827թ. օգոստոսի 17-ի Օչականի ճակատամարտին, որը շատ կարևոր դեր կատարեց Արևելյան Հայաստանի ազատագրման գործում։ «Ծածանվեցին ռուսների դրոշակները հայերով բնակեցված սահմաններում։ Ռուսական զենքի հնչյունների մեջ լսվում էր օստարի լից ազատագրվելու ուրախալի լուրը։ Գարունը հարություն էր տվել բնությանը, իսկ հուսերը հարություն էին տվել նրանց սրտերին»[14], -հեղինակը մեջբերում է Սերգեյ Գյինկայի խոսքերը։

Նշենք նաև, որ աշխատության գեղարվեստական արժեքներից մեկն էլ պատմական տարաբնույթ անցքերի և պատերազմական գործողությունների կենդանի նկարագրությունն ու պատկերումն է, գեղարվեստականի միաձուլումը պատմական իրողություններին։ Այստեղ անգամ դժվար է տարանջատել պատմականի և գեղարվեստականի սահմանը, թափանցել պատմության ենթախորքը և պեղել մոռացվածն ու հնացածը, չգրվածն ու չվերծանվածը։

Գ. Կորիկյանը մի կողմից ներկայացրել է պատմական իրադարձությունները և փաստերը, պատմական անձնավորությունների մասնակցությունը մարտական գործողություններին և վերջիններին ընթացքը՝ ըստ ժամանակի ռազմատեղագրական քարտեզների և մյուս կողմից՝ շնչավորել պատմությունը, հերոսների ապրումները մարտական գործողությունների պահերին։ Հիշյալ գործը արժելորվում է նաև մարտական գործողությունների նկարագրության և զինվորական հոգեբանության տեսանկյունից ևս։

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Պատմականության կարևոր պայմաններից մեկն է բնության նկարագրությունների պատմականացումը, պատմական միջավայրի փոխանցումը բնությամբ: Բնությանն ու ռազմերթերը զուգակցված են, և Ղերիկյանին հաջողվել է հասնել նման միջավայրի ստեղծմանը ռուս գինվորների համագետստի և հայ աշխարհագորայինների հանդերձանքի, ինչպես նաև ժամանակի ռուսական հրետանու սվինավոր Երկարավոր հրացանների պատկերնամբ: Նման պատմականությամբ է պատվել ռուսական բանակի ռազմերթի ընթացքը Փամբակից մինչև Աշտարակ ճգվող ճանապարհին:

Այսպիսով՝ իր պատմագեղարվեստական արժեքայնությամբ «Սրբացած հուշարձան» աշխատությունում հեղինակը, հավատարիմ մնալով ժամանակի պատմական շնչին, վկայակոչեց փաստեր, արձանագրություններ, քննեց պատմական հարցեր, կարևորեց ոչ էական թվացողը, մոռացվածը, փնտրվածն ու չգտնվածը:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայրենիքի ձայն, N 31[575], 28 հուլիսի, 1976:
2. Գրական թերթ, N31[1865], ուրբաթ, 30 հուլիսի, 1976:
3. Ղերիկյան Գ., Սրբացած հուշարձան, Եր., 1975, էջ 123:
4. Հայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, հ.5 , Եր., 1974, էջ 126:
5. Ղերիկյան Գ., Սրբացած հուշարձան, էջ 54:
6. Նույն տեղում, էջ 68:
7. Հայ աշուղը[17-18-րդ դ.դ.],կազմեց Հասմիկ Սահակյան, Եր., 1961, էջ 298-299:
8. Ղերիկյան Գ., Սրբացած հուշարձան, էջ 97:
9. Նույն տեղում, էջ 98:
10. Նույն տեղում, էջ 98:
- 11.Հակոբյան Հովհ., Ուղեգործություններ, հատոր Զ, Երևան, 1934, էջ 517:
- 12.Արովյան Խ., Վերք Հայաստանի, Երևան,ՀայՊետՀրատ, 1955, էջ 88:
- 13.Ղերիկյան Գ., Սրբացած հուշարձան, էջ 3:
14. Նույն տեղում, էջ 200:

### ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գևորգ Ղերիկյանի «Սրբացած հուշարձան» աշխատության պատմագեղարվեստական  
արժեքը  
Աննա Երկանյան

Վերոնշյալ հոդվածում անդրադարձ է կատարվում Գևորգ Ղերիկյանի «Սրբացած հուշարձան» աշխատությանը, քննվում ստեղծագործության ժամրային բնույթը: Հաշվի առնելով փաստավակերպրական արձակի հետ հարաբերվելը և դրան զուգահեռ շարադրանքի գեղարվեստական շունչը՝ այն համարվում է պատմագեղարվեստական ժամանակագրություն: Նշվում է Գ.Ղերիկյանի օգտագործած բազմաթիվ աղբյուրները և դրանց վերլուծությունը աշխատությունում: Նկարագրվում են հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության զինակցության դրսնորումները, հայ ժողովրդի երախտագիտությունը ռուս հերոս Սոնտրեզորին: Ինչպես նաև հոդվածում պատկերվում է գեղարվեստականի միաձուլումը պատմական իրողություններին:

**РЕЗЮМЕ**

**Художественно-историческая ценность работы Геворга Деврикяна**

**“Священный памятник”**

**Анна Ерканян**

**Ключевые слова:** художественно-исторический, хронология, история армянского народа, национально-освободительское движение, командир Монтрезор, памятник.

В данной статье обращаемся к работе Геворга Деврикяна “Священный памятник”, исследуем жанровую сущность произведения. Учитывая близость с хроникально-документальной прозой и параллельно с этим художественный дух изложения, он считается художественно-исторической хронологией.

Отмечаются многочисленные источники, использованные Деврикяном и приводится их анализ. Описываются проявления многовековой дружбы, соратничества армянского и русского народов, благодарность армянского народа русскому герою Монтрезу. Также в статье показывается слияние художественного с исторической реальностью.

**SUMMARY**

**The artistic historical value of the work of Gevorg Devrikyan's “Sanctified monument”.**

**Anna Yerkanyan**

**Keywords:** artistic historical, chronology, history of Armenia, national liberation movement, commander Montrazor, monument.

In this article a reference is given to Gevorg Devrikyan's “Sanctified monument”, and the genre of the work is being studied. Considering its correlation with the chronicle-documentary prose and parallelly the artistic spirit of the essay, it is considered to be an artistic historical chronology. Numerous sources used by G. Devrikyan, as well as their analysis in the work are noted. The manifestation of the friendship between the Armenian and Russian people and the gratitude of the Armenian people toward the Russian hero Montrezro are presented.

The article also describes the merger of the art and historical facts.